ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մայիսի 19-ին ժամը 12:10-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Փարաքար համայնքի ավագանու արտահերթ նիստը վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստը արձանագրում է աշխատակազմի քարտուղարի պ/կ Գ.Մանուկյանը:

Համայնքի ղեկավարաը ներկայացրեց ավագանու նոր անդամին՝ Ռուբիկ Աղեկյանին, վերջինիս շնորհավորեցին ներկա ավագանու անդամները:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի որոշման նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Ավագանու անդամ Նեկտար Սարդարյանն առաջարկեց ավագանու նիստի օրակարգում ընդգրկել նաև ևս 5 հարց, դրանք են.

1.Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և միացյալ տնօրինություններ լուծարելու մասին,
2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,
3. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 35-Ա որոշման N 3 հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին,
4. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին,
5. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

Քվեարկության դրվեց հարցերն օրակարգում ընդգրկելու հարցը
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 19-ի հերթական նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և Փարաքար համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 23-ի թիվ 22- Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություն կատարելու մասին
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին ուսման վարձավճարի գծով օգնություն տրամադրելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 35-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի
8. Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու և ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին
9. Հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
10. Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և միացյալ տնօրինություններ լուծարելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար գյուղական համայնքի «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությանն անվանափոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին
12. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 35-Ա որոշման N 3 հավելվածն ուժը կորցրած ճանաչելու մասին
13. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն հիմնադրելու մասին
14. «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
15. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստի օրվա սահմանում

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, նշեց նախագծի բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և համայնքային սեփականություն հանդիսացող 04-094-0017-0027 կադաստրային ծածկագրով, 0.0404 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի հող, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին, այն է . Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի վարչական սահմաններում գտնվող՝ Աննա Գևորգի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-082-0306-0011 կադաստրային ծածկագրով 0.43 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (գործառնական նշանակությունը 3-րդ կարգի կորիզավոր) նպատակային նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն և անասնաշենք կառուցելու համար:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և Փարաքար համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 23-ի թիվ 22- Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին, անհրաժեշտ է Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.
Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող 04-094-0017-0002 կադաստրային ծածկագրով 0.2216 հա պետական սեփականություն հանդիսացող՝ հատուկ նշանակության նպատակային նշանակությամբ հողամասի նպատակային նշանակությունը փոխել, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հող, գործառնական նշանակությունը արդյունաբերական օբյեկտների:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեցին – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածում փոփոխություն կատարելու մասին, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 39-Ա որոշմամբ հաստատված հավելվածում կատարել փոփոխություն՝ 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ. «14.Համայնքի բնակչի հուղարկավորության կազմակերպման համար համայնքի ղեկավարը կարող է իր որոշմամբ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, հատկացնել դրամական օգնություն՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հուղարկավորության ժամանակ Փարաքար համայնքի կողմից հատկացնել ծաղկեպսակ՝ 15000 ՀՀ դրամի սահմաններում: Կատարված աշխատանքների մասին ներկայացնել հաղորդում ավագանու առաջիկա նիստին, որն ավագանու կողմից կընդունվի ի գիտություն:»:
Ավագանու անդամ Դ.Ախտոյանն առաջարկեց ծաղկեպսակի գումարը ևս ավելացնել օգնության տրամադրվող 40 000 դրամին:
Լյուդվիգ Գյուլնազարյան – իմ կարծքով ծաղկեպսակ տանելու միտքն ավելի նպատակահարմար է:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին դրամական օգնություն տրամադրելու մասին , նշեց որ դիմել են բնակիչներ՝ խնդրանքով ցուցաբերելու դրամական օգնություն, դիմումների իսկությունը ճշտելու համար սոցիալական հանձնաժողովն այցելել է բոլոր դիմումատուներին, ուսումնասիրել է նրանց կենցաղային պայմանները, կազմել է արձանագրություն, առաջարկում եմ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի անապահով բնակիչներին տրամադրել 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ օգնություն՝ համաձայն հավելվածի:Եղել են դիմումատուներ որոնք մերժվել են հաշվի առնելով նրանց բարվոք պայմանները:

Դավիթ Մինասյան – մեզ մի ընտանիքից դիմել են 2 անձ, առաջարկում եմ ցուցաբերել յուրքանչյուրին 40000-ական դրամ, քանի որ միանվագ օգնության չափը չպետք է գերազանցի 40 000 դրամի շեմը:
Կարապետ Արթենյանը նշեց, որ նրանք 44 օրյա պատերազմի ժամանակ զոհվածի ծնողներ են, որդու շիրմաքարն ուժեղ քամու ժամանակ կոտրվել է, գումարն անհրաժեշտ է այն վերանորոգելու համար:
Լ.Գյուլնազարյանն առաջարկեց որպես բացառիկ դեպք ընդառաջել:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը. առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մուսալեռ գյուղի բնակիչ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բակալավրիատի հեռակա ուսուցման երրորդ կուրսի ուսանողուհի Մարիետա Գագիկի Թովմասյանին տրամադրել մասնակի ուսման վարձավճարի հատուցում 100 000 ՀՀ դրամի չափով:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11 անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ՝ որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 35-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի: Նշեց որ հավելվածը վերաբերում է Փարաքարի համայնքապետարանի «Բարեկարգում» տնօրինության հաստիքացուցակին

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, ներկայացրեց որ անհրաժեշտ է տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում Գայանե Ռազմիկի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0201-0046 կադաստրային ծածկագրով՝ Ֆ.Նանսենի փողոց թիվ 25-27 հասցեում գտնվող բնակավայրի, բնակելի կառուցապատման 0.1212 հա հողամասին կից բնակավայրի, այլ հողեր գործառնական նշանակության 0.00755 հա հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հող և այդ հողամասն ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով, օտարել Գայանե Ռազմիկի Սահակյանին: Նշեց, որ վաճառքի գինը սահմանվում է մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքին համապատասխան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը. Առաջարկեց տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Էդգար Վահանի Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0104-0029 կադաստրային ծածկագրով՝ Հ.Աճառյան փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող բնակավայրի, բնակելի կառուցապատման 0.0685 հա հողամասին կից բնակավայրի, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.00681 հա հողամասն ուղղակի վաճառքի միջոցով՝ ընդլայնման նպատակով օտարել՝ Էդգար Վահանի Նիկողոսյանին: Վաճառքի գինը սահմանել մեկ քառակուսի մետրի համար 6834.3 ՀՀ դրամ՝ կադաստրային արժեքին համապատասխան:

Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

10-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Մելանյա Կոստանյանը , նա ներկայացրեց Մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և միացյալ տնօրինություններ լուծարելու մասին որշման նախագիծը .

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել՝

1) «Մերձավանի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ 1139, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Մերձավան, Երիտասարդության 39, գրանցման համարը՝ 99.215.1053631):
2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեկ գյուղական համայնքի «Մշակույթ և սպորտ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ 1115, Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, գյուղ Այգեկ, 6 փողոց, 2 շենք, գրանցման համարը՝ 99.215.792000):
3) ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի «Մշակույթ» միացյալ տնօրինությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, 378350, Արմավիրի մարզ, գյուղ Բաղրամյան, գրանցման համարը՝ 99.180.01340):
4) ՀՀ Արմավիրի մարզի Նորակերտ համայնքի «Կրթություն և մշակույթ» միացյալ տնօրինությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, 378315, Արմավիրի մարզ, գյուղ Նորակերտ, գրանցման համարը՝ 99.180.01346):
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարային հանձնաժողով:
3. Լուծարային հանձնաժողովին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպությունների լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ տնօրինությանը:

Գոռ Սարիբեկյանն առաջարկեց օրակարգում լրացուցիչ ընդգրկված հարցերի քննարկումը թողնել հաջորդ նիստին ավելի համապարփակ ուսումնասիրելու համար:

Ավագանու անդամներն առաջարկեցին հայտարարել 15 րոպե ընդմիջում:

Առաջարկը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Առաջարկն ընդունվեց միաձայն: Ժամը 12^{45} հայտարարվեց ընդմիջում:

13^{00} –ին նիստը շարունակվեց:

11-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց Դավիթ Մինասյանը, առաջարկեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի հաջորդ նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի հունիսի 15-ը:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն:

Գոռ Սարիբեկյանն առաջարկեց օրակարգում լրացուցիչ ընդգրկված այդ հարցերի քննարկումը թողնել ավագանու հաջորդ նիստի քննարկմանը:

Նիստը նախագահող Դավիթ Մինասյանն առաջարկեց ավագանու անդամ Նեկտար Սարդարյանի կողմից առաջարկված և ավագանու օրակարգում ընդգրկված հարցերի քննարկումը թողնել հաջորդ նիստում քննարկելու համար և օրակարգը հաստատված համարել առանց այդ 5 հարցերի:

Առաջարկը դրվեց քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո ավագանու նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Պ/Կ՝ Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ